Առաջարկ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների տարանջատմամբ ձևավորել առանձին քաղաքացիական և վարչական պալատներ՝ առանձնացնելով նաև դատավորներին: Ընդ որում, որպես նախագծի ընդունման հիմնավորում մատնանշվում է վարչական արդարադատության արդյունավետության բարձրացումը, դրա մատչելիությունը քաղաքացիների համար, ինչպես նաև վարչական արդարադատության բեռնաթափումը: Որպես առաջարկվող իրավակարգավորման անալոգիա ներկայացվում է մի շարք երկրների՝ Ռուսաստանի, Լիտվայի և այլ երկրներում առկա տարբերակները:

Ներկայացված նախագծի, մասնավորապես՝ սահմանադրական օրենքի փոփոխություններում նման հատվածական լուծումները անընդունելի են հետևյալ նկատառումներից ելնելով.

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով առաջադրվեց դատավորների թվի ավելացման խնդիր: Քննարկվող խնդիրը հատկապես ակնառու է վարչական արդարադատության ոլորտում, որտեղ անձի և պետության միջև առաջացող վարչաիրավական հարաբերություններում բողոքների քանակը վերջին տարիներին գնալով աճում է՝ հասնելով աննախադեպ ցուցանիշների՝ ըստ էության անարդյունավետ և անհասանելի դարձնելով վարչական արդարադատությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Խնդրի լուծման նպատակով վերոնշյալ ռազմավարությամբ, ինչպես նաև 12.02.2020թ. ՀՀ վարչապետի՝ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին որոշման հիման վրա, նախատեսվում էր նաև դատական իշխանության մարմինների համակարգային փոփոխություններ, որոնք պետք է նպատակամղված լինեին ապահովելու դատական իշխանության անկախությունը, արդյունավետ գործունեությունը՝ վերջնանպատակում ակնկալելով երաշխավորել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Սակայն դատական իշխանության բարեփոխումների վերաբերյալ ոլորտային հիմնական իրավական ակտում՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում վերջին մեկ տարում տասից ավել փաթեթային փոփոխությունները ոչ միայն չեն նպաստել դատական իշխանության անկախության ապահովմանը, դատավորների ծանրաբեռնվածության նվազեցմանը, այլ ավելացրել են դատական իշխանության կախվածության իրավական հնարավորությունները, վատթարացրել են դատավորների ծանրաբեռնվածության վիճակը: Վերոնշյալի հիմնական պատճառը օրենսդրական բարեփոխումների չհամակարգված բնույթն է, վարչաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրության անկատար վիճակը, որի շտկման ուղղությամբ քայլերը բովանդակային առումով տեսանելի չեն: Մասնավորապես՝ ներկայումս ՀՀ վարչական արդարադատության ծանրաբեռնվածության զգալի մասն են կազմում հարկային, տնտեսական մրցակցության, քաղաքաշինական և վարչաիրավական հարաբերությունների այլ ուղղություններից բխող վեճերով գործերը: Նշյալ ոլորտներում նորմատիվային պահանջների հակասական սահմանումները, իրավական բացերը, կոռուպցիոն էական ռիսկերին նպաստող անիրավաչափ կարգավորումները բացառում են դատական բարեփոխումների ցանկացած լուծումների պարագայում վարչական

արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակի իրականացումը: Նման պայմաններում, օրենսդրության վերոնշյալ ոլորտներում արմատական և համակարգային բարեփոխումների անտեսմամբ, իրավական կայունության և որոշակիության սկզբունքի ապահովման նպատակով սահմանադրական օրենքի կարգավիճակ ունեցող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը ռազմավարական պլանավորմանը հակասող անթույլատրելի հաճախականությամբ և բովանդակությամբ ենթարկվում է փոփոխությունների՝ անտեսելով օրենսդրական ակտերի փոխկապվածության, իրավակարգավորումների համալիր բնույթի առանձնահատկությունները:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք ձեռնպահ մնալ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում իրավական և կառավարման ռազմավարության սկզբունքներին հակասող նմանատիպ փոփոխություններից և օրենսդրության կատարելագործման քաղաքականության ոլորտում առաջնորդվել համակարգայնության, ռազմավարական երկարաժամկետ պլանավորման, համալիրության սկզբունքներով՝ ապահովելով նաև պետական միջոցների ծախսերի արդյունավետությունը: